ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

02.03.2021թ.

ՈՐՈՇՈՒՄ 88-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ, 42-րդ հոդվածներով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ և 2191 պրիմ հոդվածներով, հետազոտելով Սևադա Համբարձումի Բաբայանի (ծնված՝ 01.12.1952թ., AN0404931, տրված՝ 13.03.2013թ. 032-ի կողմից, հաշվառված է Գորիս քաղաքի Վանքի Տափ թ.11/5 հասցեում) կողմից կատարված վարչական իրավախախտման վերաբերյալ Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բաժնի աշխատակիցների կողմից 2021 թվականի հունվարի 27-ին կազմված արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի՝ ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Վանքի Տափ թ. 11/5 հասցեի բնակիչ՝ Սևադա Բաբայանը ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Վանքի Տափ թաղամասի 12 շենքի հարևանությամբ սեփականության իրավունքով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքին պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցել է շինություն, այսինքն կատարել է արարք, որն առաջացնում է պատասխանատվություն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությամբ:

Նկատի ունենալով, որ Սևադա Բաբայանի արարքը վարչական իրավախախտում է նախատեսված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությամբ, ինչպես նաև ապահովելով փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Սևադա Համբարձումի Բաբայանին ենթարկել վարչական պատասխանատվության, նրա նկատմամբ նշանակել վարչական տույժ, տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով, այն է՝ 400.000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

2.Սևադա Բաբայանի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Գորիսի համայնքապետարանի 900285125150 հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացվի Գորիսի համյանքապետարանի աշխատակազմին:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում օրենքով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

4. Որոշման պատճենը 3 օրվա ընթացքում հանձնել Սևադա Բաբայանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշումը սահմանված կարգով Սևադա Բաբայանին հանձնելու օրվանից հետո:

6. Սույն որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումը սահմանված կարգով հանձնելու օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2021/02/03
Ք.Գորիս